Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 25th September 2022 Bulletin 41/2022

Third Sunday of the Exaltation of the Holy Cross—Feast of the Holy Cross of Varak

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 6:14-18

Բայց ես ամե՛նեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: Որովհետեւ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթլփատութիւնը, հապա՝ նոր արարած ըլլալը: Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայէլին վրայ:

Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր Յիսուսի վէրքին սպիները:

Եղբայրնե՛ր, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

The Epistle of St Paul to the Galatians 6:14-18

May I never boast except in the cross of our Lord Jesus Christ, through which [a] the world has been crucified to me, and I to the world. Neither circumcision nor uncircumcision means anything; what counts is the new creation. Peace and mercy to all who follow this rule—to [b] the Israel of God.

From now on, let no one cause me trouble, for I bear on my body the marks of Jesus.

The grace of our Lord Jesus Christ be with your spirit, brothers and sisters. Amen.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24 :30-36

եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: Եւ ան պիտի ղրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

«Թզենիէ՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան”: Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»:

«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՝ միա՛յն իմ Հայրս:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 24:30-36

“Then will appear the sign of the Son of Man in heaven. And then all the peoples of the earth [c] will mourn when they see the Son of Man coming on the clouds of heaven, with power and great glory. [d] And he will send his angels with a loud trumpet call, and they will gather his elect from the four winds, from one end of the heavens to the other.

“Now learn this lesson from the fig tree: As soon as its twigs get tender and its leaves come out, you know that summer is near. Even so, when you see all these things, you know that it [e] is near, right at the door. Truly I tell you, this generation will certainly not pass away until all these things have happened. Heaven and earth will pass away, but my words will never pass away.

The Day and Hour Unknown

“But about that day or hour no one knows, not even the angels in heaven, nor the Son, [f] but only the Father.

Ս.Գևորգ բաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի և Ռոմանոս Երգեցողի հիշատակության օր

Ս. Գևորգը Կապադովկացի բարեպաշտ քրիստոնյա ընտանիքի զավակ է: Զինվորագրվելով հռոմեական բանակին՝ իր ցուցաբերած քաջության և հավատարմության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում արժանացել է հազարապետության պատվին: Կայսեր հրավիրած խորհրդակցության ժամանակ ընդդիմացել է քրիստոնյաներին հալածելու նրա ծրագրին՝ բացահայտելով իր քրիստոնյա լինելը: Կայսրը, զարմացած ու ապշած տեղի ունեցածից, բանտարկել է սրբին՝ ենթարկելով անլուր չարչարանքների: Ս. Գևորգի քարոզների շնորհիվ շատերը դարձի են եկել, որոնց թվում էր նաև Ալեքսանդրիա թագուհին: Մի կախարդի պատվիրում են, որ երկու բաժակ դեղ պատրաստի սրբին դարձի բերելու համար: Առաջին բաժակը խմելուց հետո սուրբը պիտի մտքափոխվեր, իսկ երկրորդից հետո՝ մեռներ: Բայց Գևորգն առ Աստված ունեցած հավատի շնորհիվ խմում է երկու բաժակն էլ և ի զարմանս բոլորի՝ կենդանի մնում: Նա նաև հարություն է տալիս մի մեռյալի: Կայսեր բազում թախանձանքներից հետո, Գևորգը վերջապես համաձայնվում է կուռքերին զոհ մատուցել: Սակայն հասնելով կռատուն մեկառմեկ ջարդում է բոլոր կուռքերը՝ ցույց տալով դրանց սուտ և սին լինելը: Այս հանդուգն արարքի համար Դիոկղետիանոս կայսրը 303 թվականին գլխատել է տալիս Ս. Գևորգին:

Ադոկտոսը նահատակվել է 320 թվականին, հայկական Մելիտենեում, Մաքսիմիանոսի ժամանակ: Պետական պաշտոնյա է եղել Եփեսոսում: Չցանկանալով իր աղջկան՝ Կալիսթենեին կնության տալ հեթանոս կայսեր, նրան փախցնում է արևելք: Քիստոնյա լինելու պատճառով, կայսեր հրահանգով զրկվում է կոչումից և ունեցվածքից և վտարվում Մելիտենե: Տեղի կուսակալին չի հաջողվում Ադոկտոսին հեթանոս դարձնել: Անսասան մնալով իր հավատին՝ գլխատվում է: Սրբի կինն ու մյուս աղջիկը՝ Պելոպիան թաղում են նրան: Կոստանդիանոս կայսեր քույրը՝ Կոստանցան, պաշտպանում է Կալիսթենեին, որը հոր մասունքները տեղափոխում է Եփեսոս, ուր հետագայում սրբի գերեզմանի վրա մատուռ է կառուցվում:

Ռոմանոս Երգեցողը համարվում է շարականների կանոնների ստեղծողը: Եղել է սարկավագ Կ. Պոլսի Ս. Սոփիա եկեղեցում: Լավ երգել և կարդալ չկարողանալու

պատճառով անարգվել է շատերի կողմից: Ս. Աստվածածինը հայտնվել է նրան երազում և տվել է մի թղթագլան՝ հրամայելով ուտել, որից հետո Ռոմանոսն ստացել է շարականներ գրելու և կատարելու բացառիկ շնորհ: Վախճանվել է 556 թվականին:

Commemoration of Sts. Gevorg the Captain, Adoktos and Romanos the Singer

St. Gevorg the Captain (St. George the Warrior) was from Cappadocia. He was born in a pious Christian family. Becoming a soldier of the Roman Army in a short period he deserves the honor of becoming Captain thanks to his courage and devotion. During the council convened by the Roman Emperor Dioklethianos he opposes to his plans on Christians' execution, and thus the fact that he is Christian, is revealed. The King, becoming surprised and astonished, orders to imprison the Captain and subjects him to severe torments. Many people, among them the Queen Alexandria, become Christians thanks to the preaching of St. George. A magician is ordered to prepare two kinds of remedies for trying the saint and changing his faith. By the first cup the saint should change his mind, and drinking the second cup, he should die. St. Gevorg drinks both cups, but thanks to the power of his faith towards God he remains alive. He also raises a man from the dead.

After the King's repeated requests St. Gevorg finally agrees to offer sacrifice to the idols. However, reaching the heathen church he breaks all idols one by one. For this act the King orders to behead St. Gevorg and he is martyred in about 303 A. D.

St. Adoktos (Adauctus) has been martyred in 320 A. D., in the Armenian Melitene, during the reign of Maximianos. He has been a state servant in Ephesus. Not willing to marry her daughter – Kalistene, with the Heathen King, he takes her away to the East. For being Christian upon the King's order he is deprived of his title and property and is exiled to Melitene. The local governor also fails to convert Adoktos to the heathen religion. Remaining steadfast and unshaken in his faith, the saint is beheaded. His wife and the other daughter - Pelopia, bury him. Costantsa - sister of the Emperor Kostandianos, defends and protects Kalistene, he transfers the relics of his father to Ephesus, where a chapel is built over the saint's tomb of in the future.

St. Romanos the Singer (the Melodist) is considered to be the author and creator of the church hymns' canons. He has served as a deacon in the Church of St. Sophia, of Constantinople. Many people have mocked at him for his being unable to sing and read well. Once St. Mary appears to him in his dream and giving him a paper roll, orders to eat it. After the dream Romanos is granted the virtue to create and sing church hymns and songs. St. Romanos passes away in 556 A. D.

Վարագա Սուրբ Խաչի տոն

Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նշում են Խաչին նվիրված տոները: Բայց ի տարբերություն մյուս եկեղեցիների, Հայ Եկեղեցին ունի նաև Խաչին նվիրված զուտ ազգային մի տոն, որը հայտնի է Վարագա Սուրբ Խաչ անունով: Այն միշտ տոնում են Խաչվերացից երկու շաբաթ հետո, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը հանդիպող կիրակի օրը:

Ագաթանգեղոս պատմիչի վկայության համաձայն՝ Հռիփսիմյանց կույսերը, փախչելով Դիոկղետիոնոս կայսեր հալածանքներից ու հետապնդումներից, գալիս են Հայաստան և ապաստանում Վաղարշապատի հնձաններում: Սակայն մինչև Վաղարշապատ հասնելը, նրանք բնակություն են հաստատում Վանա լճից հարավ-արևելք ընկած Վարագա լեռան վրա: Սբ. Հռիփսիմեն իր կրծքին կախած Տիրոջ խաչափայտի սրբազան մասունքն ապահովության համար հանձնում է աղոթող ճգնավորներին և խնդրում, որ պահեն այն քարայրներից մեկում: Սուրբ մասունքն այդպես պահված մնում է մինչև 7-րդ դարը: 653 թվականին, երբ Թոդիկ ճգնավորն իր Հովել

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

աշակերտի հետ աղոթում էր Վարագա լեռան վրա և խնդրում, որ Աստված ողորմություն անի և ցույց տա Սբ. Խաչի տեղը, հանկարծ 12 լուսեղեն սյուներ են երևում լեռան շուրջը, իսկ նրանց միջև փայլում է լուսավոր Խաչի նշանը, որն իրենց հետ Հայոց աշխարհ էին բերել Տիրոջ սիրասուն կույսերը: 12 օր շարունակ լուսեղեն սյուները տեսանելի են լինում նաև հեռավոր վայրերից: Ուրախալի այս լուրը
տարածվում է ամենուր:

Ներսես Շինող Կաթողիկոսը և Թեոդորոս իշխանի որդի Վարդ սպարապետն իմանալով այդ մասին, գնում են Վարագա լեռը՝ տեսնելու կատարված հրաշքը: Վեհափառ հայրապետը ժողովրդի աջակցությամբ կառուցում է նաև մի փառավոր եկեղեցի, որն էլ ի վկայություն կատարված հրաշքի՝ անվանում է Սբ. Նշան: Ներսես Հայրապետը գրում է նաև «Նշանաւ ամենայաղթ» անզուգական շարականը, որը երգում են տոնի օրը:

Սրբազան այդ մասունքը մինչև 1021 թվականը մնում է Վարագա վանքում, որը Սենեքերիմ Արծրունին տեղափոխում է Սեբաստիա: Նրա մահից հետո մասունքը նորից փոխադրում են նախկին վայրը, որտեղից 1651 թվականին գերեվարվում է Խոշաբ: Սակայն 1655 թվականին ազատվելով՝ գետեղվում է Վանի Սբ. Տիրամոր եկեղեցում, որն այնուհետև վերանվանվում է Սբ. Նշան, ուր և պահվում էր մինչև 1915 թվականը

Feast of the Holy Cross of Varague

All Christian Churches each year solemnly celebrate all feasts dedicated to the Holy Cross. The Armenian Apostolic Church, in difference to the other Christian Churches, celebrates another purely national feast dedicated to the Holy Cross, which is famous as the Holy Cross of Varague. The Armenian Church celebrates this feast two weeks after the Feast of Exaltation of the Holy Cross, that is - the Sunday during the period of September 25 - October 1.

According to the historian Agathangelos, St. Hripsime and her companions, running away from the Roman Emperor Dioklethianos, who started persecutions against Christians, reach to Armenia and find shelter in Vagaharshapat. However, before reaching Vagharshapat they stop at the Mountain Varague, which is to the southeast from the Lake Van. Taking off from her neck the relic of the Lord's Wooden Cross, St. Hripsime gives it to the praying monks living on the mountain and asks them to preserve it in one of the caves. Thus, the sacred relic remains hidden till the seventh century.

In 653 A. D. the monk Todik and his disciple Hovel pray at the Mountain Varague and ask God to show the place of the relic. Suddenly 12 bright columns appear around the mountain and the sign of the Cross is seen among the columns. For 12 days the bright columns remain visible even from distant sites. This joyful news spreads everywhere.

Nerses the Creator Catholicos who was the Catholicos of All Armenians of that period, and Captain Vard, son the Knight Theodoros, learning about that miracle, go the Mountain Varague to personally witness it. With the support of the Armenian people the Pontiff builds a magnificent church, which in honor of the miracle is named Holy Cross Church. The Pontiff Nerses also writes the marvelous church hymn "By means of the most powerful sign", which is sung in the churches on the day of the feast.

The sacred relic remains at the Mountain Varague till 1021 A. D. Later the Armenian King Senekerim Artsrouni brings the relic to Sebastia. After the latter's death the relic is again transferred to its old place and remains there until 1651 A. D. when the relic is taken to Khoshab. In 1655 A. D. the relic is placed in the Church of Holy Godmother, in Van, which is renamed to Church of Holy Sign. The relic was preserved there till 1915 A. D.

DAILY BIBLE READINGS FOR 2022 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

26 September	Sts. David of Tvin, and the Martyrs Lambeos and Lambeas Proverbs 13:1-7; Micah 7:18-20; Hebrews 12:1-7; Luke 13:22-30
27 September	Eustathius and his wife Theophistia and their two sons, the Virgins Iermonia and Catherine Lamentations 3:22-56; 2 Timothy 3:10-15; Matthew 5:1-12
28 September	2 Corinthians 12:10-18; Mark 10:35-45
29 September	Sts. Sahag and Hamazasb the Princes Wisdom 6:11-21; Jeremiah 17:7-8; Romans 8:18-26; John 16:1-4
30 September	2 Corinthians 12:19-13:4; Mark 11:15-26

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Իմ ընտրեալներն այլեւս զուր տեղը չպիտի չարչարուեն եւ անէծքի համար որդիներ չպիտի ծնեն, որովհետեւ նրանք իրենց զաւակների հետ միասին Աստծուց օրհնուած սերունդ են» (Ես. 65:23):

Աստծոյ սիրելի եւ թանկագին զաւակներ, խաչով փրկագնուած ընտրեալներ, ամէն տօն ուղերձ է, դաս, որ հէնց այդ օրուայ խնդրի լուծման համար է: Այսօր պէտք է միասին սերտենք մեր դասը, մեզ ուղղուած պատգամը:

Վարագայ Սուրբ Խաչի տօնն է: Արդեօ՞ք միայն Եկեղեցու յիշողութեան թարմացնման համար ենք տօնում այս տօնը: Ի՞նչ է իրականում եղել. Այրարատ նահանգ շարժուելուց առաջ Աստծոյ պատուերով Սուրբ Հռիփսիմէն իր մօտ եղող Խաչի մասունքն ամփոփեց Վարագայ լերան վրայ, որ անյայտ մնաց մինչեւ արաբական յեղեղի տագնապած օրերը, երբ Հայոց աշխարհը քաղաքական ու կրօնական մեծ յարձակման ներքոյ էր: Ժողովրդի այս մեծ տագնապի մէջ երկու ճգնաւոր վանականներ, ամբողջ ազգի մտահոգութիւնն Աստծով փարատելու հաւատով, խնդրեցին Տիրոջ միջնորդութիւնը, խնդրեցին երկար, ապա շարունակեցին ծոմով ու աղօթքով: Այս մեծ աղօթական յայցի պատասխանը այնպիսին եղաւ, որ դարերով պատմւում է եւ մենք էլ այսօր նոյնը ուրախութեամբ տօնախմբում ենք:

Յովէլ ճգնաւոր եւ Թոդիկ… Այս անունները գուցէ շատերը չյիշեն, բայց իրենց աղօթքն է, որ հրաշք ծնեց, որ երեք հարիւր յիսուն տարուայ ընդմիջումից յետոյ Խաչափայտի մասունքը գիշերուայ մէջ յայտնուեց մեծ ձայնով, չտեսնուած լոյսով, բոլորին լսելի հրեշտակային երգերով, անուշահոտութեամբ: Լոյսից լսուեց երկնային ձայնը. **«Քրիստոս հաճեց բնակուել սուրբ Նշանի մէջ՝ Հայոց աշխարհի պահպանութեան եւ փրկութեան համար»**:

Անանձնական սիրուց բխած աղօթքն է, որ փարատում է սրտերից կասկած, վախ ու տագնապ: Վարագայ Սուրբ Խաչի տօնը մեզ պատմում է աղօթքի հրաշքի մասին՝ քաջալերելով փոթորկուն օրերին ծոմով եւ աղօթքով յուսալ ու ապաւինել Տիրոջը: Սէրն առ Աստուած եւ սէրն առ ազգակիցները մղեցին այս երկու աղօթողներին առաւել խստացնել իրենց ճգնութիւնները: Սա յաղթանակ է հաւատի տկարութեան եւ անյուսութեան դէմ, քանի որ լուսեղէն այս յայտնութիւնը տասներկու օր անընդմէջ աղօթքի ու անսուաղ (առանց հաց ու ջրի) ծոմի արձագանքը եղաւ : Սա աղօթքի զէնքով հոգեւոր անտեսանելի ճակատամարտ շահել է, երբ Աստուած է խօսում եւ լռում են բոլոր ձայները:

Աւետարանում մի դրուագ կայ, երբ առաքեալների նաւակը ալեկոծութեան, փոթորկի մէջ էր, իսկ Քրիստոս լերան վրայ աղօթում էր: Գիշերուայ մի ժամի առաքեալները տեսնում են ջրերի վրայով քայլելով Յիսուսին: Վախից աղաղակեցին, բայց Փրկչի ձայնը գիշերուայ խաւարի միջից լոյսի պէս հասաւ իրենց. ***«Ես եմ, մի՛ վախեցէք»***: Քրիստոս ասում է, որ եթէ թէկուզ երկու հոգի երկրի վրայ միաբանուեն խնդրանքով, Տէրն անարձագանք չի թողնի: **«Դարձեալ ձեզ ասում եմ. եթէ ձեզնից երկուսը միաբանուեն երկրի վրայ որեւէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կը կատարուի նրանց համար իմ Հօր կողմից, որ երկնքում է. որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ»**(Մատթ. 18:19-20): Երկու ճգնաւորների աղօթական սէրն էր, որ ամբողջ Հայոց աշխարհին Քրիստոսի պահպանութիւնը բերեց: Երկրից երկինք ելած աղօթքը երկնքից տասներկու լուսեղէն սիւներ է իջեցնում երկիր: Երկու հոգու աղօթքը ամբողջ զաւառի ժողովրդին է աղօթող ու փառաբանող դարձնում:

Վարագայ Սուրբ Խաչի տօնը ճգնական եւ աղօթական սխրանքի տօն է, պատգամ՝ աղօթելու այնպէս, որ շուրթերից աւելի հոգով լինի աղօթքը, խոնարհ հոգով, ծոմով մարմինն անգամ խոնարհեցրած: Չէ՞ որ «Սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում»:

«Իմ ընտրեալներն այլեւս զուր տեղը չպիտի չարչարուեն…» : Այլեւս զուր չեն ճգնութիւններն ու աղօթքները նրանց, որոնց յոյսը Քրիստոս Աստուած է, որոնց Խաչը իբրեւ սանդուխք ունեն՝ երկրից դէպի երկինք ելնելու: Շատ են կանչուածները եւ սակաւ են ընտրեալները: Ովքե՞ր են զուր տեղը չչարչարուող այս ընտրեալները, եթէ ոչ նրանք, որոնք հոգով եւ ճշմարտութեամբ են երկրպագում Տիրոջը:

Սիրելինե՛ր, Վարագայ Սուրբ Խաչի մասունքը 1915-ից յետոյ կրկին պահուած է մարդկային աչքից: Բայց Աստծուց թաքնուած չէ ոչինչ: Մեզ թող սա յիշեցնի մարմնով տկար, բայց աղօթքով զօրաւոր այն ճգնաւորների օրինակը, որոնք բահ ու բրիչով չփորեցին, բայց արժանացան տէրունական գանձը գտնելուն:

Աղօթենք մեր ժողովրդի, մեր Եկեղեցու եւ մեր Հայրենիքի համար…

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

food▪give

The International Christian Food Bank

food▪gives, is your opportunity to share your food with hungry believers around the world.

We live in a world of terrible hunger▪

But some of us have food to spare▪

"You can make a difference by donating dry food to Christians in need"

The Armenian Church Diocese in U.K. is joining the Barnabas Fund Project, in the food▪gives initiative to help Christians in need by donating five types of dry food:

Wheat flour (wholemeal, not self-rising flour)
Rice,
Lentils, (dried)
Chick-peas, (dried)
Soap Bar,
Salt, (preferably bags, not tubs).

Please Join **St Yeghiche Armenian Church** in this drive by donating dried food (not tins) and ensure the items do not contain liquid, oil, or animal products.
We can receive bag sizes up to 3kg. alternatively you can make a financial contribution which will be used to buy the said items and donated to the cause.

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no:42674432, Sortcode:40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F ref: "food▪gives"

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic contributions.

Սիրո դավանություն



«**Վարդապե՛տ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ**»: Եւ Նա նրան ասաց. «**Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես ընթերցում**»: Սա պատասխանեց եւ ասաց. «**Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ զորությամբ եւ քո ամբողջ մտքով. եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը**»: (Ղուկ. 10: 25-27)

Աստծո սերը փրկություն է, եւ Աստծուն սիրելով միայն մարդ կարող է իրական սիրով սիրել իր նմանին, քանզի մարդկային սերը շահախնդիր է, պակասող, իսկ աստվածայինը՝ անշահախնդիր եւ ավելացող:

Պողոս առաքյալը որպեսզի ցույց տա, թե ինչ է սերը, ստորոգելիներով է մոտենում. «**Սերը համբերող է, քաղցրաբարո է. սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա. ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում**» (Ա Կորնթ. 13:4-7) եւ վերջապես իրական սիրո դրսեւորումն է Քրիստոսի գալուստը, ով մեր փրկության համար բազում տառապանքներ կրեց, չարչարվեց, խաչվեց եւ երրորդ օրը Հարություն առավ՝ այսպիսով ցույց տալով մարդկային ցեղին զոհողության եւ հոգու փրկության անկրկնելի ուղին:

Սիրիր ընկերոջդ քո անձի պես. — ասում է Տերը, ասել է թե՝ քեզ քո ընկերոջ մեջ տես, նրա սխալները՝ քոնը համարիր եւ հանուն այդ սիրո ձե՛ռք մեկնիր, օգնի՛ր, որպեսզի ազատվի շեղ ճանապարհից, սրտանց, առանց նախանձի սիրիր, ուրախացիր նրա ձեռքբերումներով, հաջողություններով եւ կարեկցիր, օգնիր նեղության եւ տխրության ժամանակ: Միայն ճշմարիտ քրիստոնյա մարդը կարող է լինել անշահախնդիր ընկեր, բարեկամ, հարազատ: Բոլոր մարդիկ էլ կարոտ են եւ կարիքն ունեն լավ ընկերոջ, բարեկամի, հարազատի, բայց շատ քչերն են, որ ձըգտում են լինել լավը: Նյութախոնարհ աշխարհում մարդ արարածը շատ հաճախ դրամն ու հարստությունը գերադասում է Աստծուց եւ նյութը՝ ընկերոջից, որից առաջ են գալիս բազում խռովություններ, դժվարություններ…

Քրիստոնյան պետք է իմանա երեք բան.

1. Աստծուն չճանաչող մարդու համար կարողությունների եւ պարտավորությունների վերին շեմ հանդիսացող Ոսկի կանոնը այն ամենացածր աստիճանն է, որտեղից քրիստոնյան պետք է սկսի իր նմանին իր անձի պես սիրելու փորձառությունը:

2. Նախաձեռնողը պետք է միշտ լինի ինքը՝ չսպասելով եղբորը եւ չակնկալելով նրանից փոխադարձը:

3. Պետք է հստակեցնի իր համար «իսկ ո՞վ է իմ ընկերը» հարցի պատասխանը. կարծում ենք առաջադրանքի կատարումը առավել դյուրին կդառնա, եթե չմոռանանք.«**Չէ՞ որ մաքսավորներն ու մեղավորներն էլ ողջունում են իրենց հարազատներին**», նաեւ. «**Սիրեցե՛ք ձեր թշնամիներին**»:

Ընկերոջը սիրելու մասին Հիսուս ասում է. «**Եթե սիրեք իրար, բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք**» Հովհ.13;35, իսկ Աստծուն սիրելու մասին ասում է.«**Ով իմ պատվիրաններն ընդունում եւ դրանք պահում է, նա է, որ ինձ սիրում է**» Հովհ.14;20: Մարդը մարդու համար կարող է թշնամի լինել, բայց օտար չէ, Աստծո համար՝ առավել եւս, մարդուն, ու մարդկայինին ընդհանրապես, օտար է Չարը՝ ողջ գոյավորի, արարչության, Կյանքի ու Սիրո թշնամին:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

No Memorial Service today.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS

Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.